ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ. ԴՈՑԵՆՏ Հ. ԲԱԲԱՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
«EUA»
00436

հունիսի 2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» թեմայով ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հանրային և միջազգային իրավունքի ամբիոնի 2026 թվականի հունիսի 16-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 9):

Մասնակցում էին՝

Ամբիոնի վարիչ ի.գ.թ., դոցենտ Ն. Տոնոյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյանը, ի.գ.թ., դոցենտ Մ. Մուրադյանը, ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Բիշարյանը, ի.գ.թ. Հ. Խաչատրյանը, ի.գ.թ. Դ. Հակոբյանը, ի.գ.թ. Զ. Սմբատյանը, ի.գ.թ. Ա. Կոչուբաևը, ի.գ.թ. Ալ. Հարությունյանը, Ա. Գյուլումյանը, Մ. Համբարձումյանը, Ա. Հարությունյանը, Ն. Լայուսը :

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերին:

Ատենախոսության հեղինակը հետազոտության արդիականությունը պայմանավորել է մի շարք հանգամանքներով, և ընդգծում է, որ ատենախոսության

մեջ բարձրացված բազմաթիվ հարցերի արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման անհրաժեշտությամբ է պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ ատենախոսական աշխատանքն ունի արդիականության բարձր մակարդակ ի թիվ այլնի, պայմանավորված նաև այն հանգամանքով, որ զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում մեծանում է հանրային իշխանության մարմինների կողմից միջամտությունների ծավալը, որոնք առերևույթ իրենցից կարող են ենթադրել իշխանական լծակներով օժտված սուբյեկտի կողմից իրեն տրված լիազորությունների չարաշահում կամ չարաշահման ռիսկ: Բացահայտելով լավագույն փորձը՝ քաղաքականությունը մշակողները կարող են նպատակաուղղված միջամտություններ իրականացնել ներգործության միջոցների արդյունավետության բարձրացնելու համար:

Հեղինակը որպես ուսումնասիրության հիմնական նպատակ սահմանել է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը կարգավորող իրավանորմերի և պրակտիկայի կատարելագործման, գործող օրենսդրությունը միջազգային պայմանագրերով նախատեսված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով համապատասխան առաջարկների մշակումը և այդ կապակցությամբ առաջադրել լուծման ենթակա խնդիրներ, ինչպես նաև սահմանել աշխատանքի տրամաբանական կառուցվածք:

Այս հանգամանքները պայմանավորում են հետազոտության տեսական և պրակտիկ արդիականությունը: Աշխատանքում բարձրացված հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում իրականացվող փոփոխությունների համատեքստում, ինչպես նաև գործածվել վարչական իրավունք դասընթացի շրջանակներում որպես դոկտրինալ մոտեցումներ: Այսպիսով՝ ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը կասկած չեն հարուցում:

Ատենախոսության հետ ներկայացված սեղմագիրն ամփոփ արտացոլում է պաշտպանության հանվող դրույթները, հետազոտության տեսական,

մեթոդաբանական հիմքը, գիտագործնական արժեքը և ատենախոսի հիմնական եզրահանգումները:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կատարած տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներից մի քանիսը, մեր կարծիքով, արժանի են առանձին ուշադրության:

Մասնավորապես՝

1. Հեղինակը նշում է, որ գործող օրենսդրությունը որոշ դեպքերում նախատեսում է առողջությանը պատճառված վնասի հատուցման առավելագույն չափ, մասնավորապես՝ մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում հատուցման ենթակա գումարը չի կարող գերազանցել վերջին մեկ տարվա աշխատավարձի 70 տոկոսը: Այսպիսի կարգավորումն առավել բնորոշ է զուտ սոցիալական երաշխիքներին և հանրային պատասխանատվության առավելագույն չափեր սահմանելու քաղաքականությանը, երբ, օրինակ, տուգանքի առավելագույն չափերը հարկ է որոշակիացնել, բայց ոչ պատճառված վնասի համարժեք հատուցման սկզբունքով: Վերջին հաշվով, հատուցման ենթակա գումարի առավելագույն չափի սահմանափակումը կարող է խաթարել անձի խախտված իրավունքների ողջ ծավալով վերականգնման հնարավորությունը, քանի որ վնասի չափի որոշման հարցում կարող են ազդեցություն ունենալ մի շարք գործոններ, որոնց հաշվառմամբ արդարացի հատուցումը կարող է գերազանցել գործող օրենքով սահմանված առավելագույն չափը: Հետևապես, առավել հիմնավորված ենք համարում հիշյալ հարցում օրենսդրորեն հատուցման առավելագույն սահմանաչափ ամրագրելուց զերծ մնալը:

2. Ատենախոսության մեջ հիմնավորվել է պետական մարմինների իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի բարելավման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գործող օրենսդրությունը

խիստ սահմանափակ դեպքերում է նախատեսում վարչական մարմինների իրավաչափ գործողությունների հետևանքով վնասի հատուցման դեպքերը (օրինակ՝ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին», «Հրդեհային անվտանգության մասին» օրենքներով): Մինչդեռ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ առավել մեծ վտանգը կանխելու նպատակով վարչական մարմիններն իրենց լիազորությունների իրավաչափ իրականացման արդյունքում վնաս պատճառեն այնպիսի անձանց իրավունքներին, որոնք կապված չեն այդ վտանգի առաջացման հետ: Հետևապես, հաշվի առնելով քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, արդիական է թվում օրենսդրական մակարդակով իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համարժեք նախապայմաններ սահմանելը: Նման կառուցակարգերի սահմանման օրինակ կարող է ծառայել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում վնաս պատճառելու ինստիտուտը: Միաժամանակ, մեր եզրահանգումն առավել համահունչ է դատարանների ողջամիտ հայեցողության սկզբունքին:

3. Հեղինակը նշում է նաև, որ գործող օրենսդրությամբ տարբերակվել են վնասի հատուցման եղանակները, ընդ որում, վնասի հատուցման համապատասխան եղանակի որոշումը ենթադրում է որոշակի պայմանների (փաստական հանգամանքների) բացահայտում և գնահատում: Իրավակիրառ պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ, տեսական և օրենսդրական լիարժեք հիմքերի բացակայությամբ պայմանավորված, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջը մերժվում է վնասի հատուցման անհիմն եղանակ հայցելու արդյունքում, ինչը չի կարող հիմնավորված համարվել իրավունքների վերականգնման հարցում: Հետևապես, ատենախոսությունում առաջադրվել են եզրահանգումներ, ըստ որոնց՝ վնաս կրած սուբյեկտը բավարարվում է միայն վնասի հատուցման պահանջ ներկայացնելով, իսկ վնասի հատուցման եղանակների ընտրությունը, ըստ այդմ՝ նախկին դրության վերականգնման հնարավորությունը կամ արդյունավետությունը, դրան համարժեք այլ դրության վերականգնման հնարավորությունը, բավարարությունը կամ ավելի

մեծ ծախսերի կատարման անհրաժեշտությունն օրենսդրական հստակ հիմքերի պարագայում գնահատվում են վարչական մարմնի կողմից:

Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար

Աշխատանքի տեսական արժեքը կայանում է վարչական իրավունքի հիմնարար կատեգորիաների խոր վերլուծության և համակարգային մոտեցմամբ կառուցված սահմանումների մշակման մեջ:

Գործնական առումով աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել օրենքի նախագծման, իրավակիրառ պրակտիկայի և դատական մեկնաբանությունների մակարդակով՝ ուղղված ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի բարեփոխմանը, իրային իրավունքների կարգավիճակի հստակեցմանը և ներդաշնակեցմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության տեքստից և գրականության ցանկից բխում է, որ հեղինակն ուսումնասիրել է միայն Ռուսաստանի Դաշնության համապատասխան իրավական ակտը, որով կանոնակարգվում են քննարկվող իրավահարաբերությունները, սակայն կարծում ենք, որ աշխատանքի գիտական արժեքն առավել կբարձրանար, եթե հեղինակը քննարկման առարկա դարձներ նաև այլ երկրների իրավական փորձը, ինչը ենթադրվում էր, որ պետք է կատարված լիներ հեղինակի կողմից, քանի որ իրավահամեմատական մեթոդը հեղինակը նշել է որպես իր աշխատանքի մեթոդաբանական հիմք: Բացի այդ, ճիշտ չէ ձևակերպված հղումը ՌԴ Քաղաքացիական օրենսգրքին «Гражданского кодекса Российской Федерации от 30 ноября 1994 г. N 51-ФЗ», մինչդեռ հայտնի է, որ ՌԴ Քաղաքացիական օրենսգիրքը բաղկացած է չորս առանձին մասերից (օրինակ, Гражданский кодекс Российской Федерации часть 2 (ГК РФ ч.2) 26 января 1996 года N 14-ФЗ):

2. Ատենախոսությունում պաշտպանության ներկայացվող դրույթները ծանրաբեռնված են լրացուցիչ իրավական վերլուծություններով, մինչդեռ այդօրինակ

վերլուծությունները չպետք է ներկայացվեն տվյալ հատվածում: Դրանց քննարկման տեղն աշխատանքի բուն նյութն է: Ընդ որում, հեղինակը պաշտպանության ներկայացվող դրույթներում օգտագործում է «կարծում ենք» ձևակերպումը, սակայն պաշտպանության ներկայացվող դրույթներով հեղինակը պետք է ներկայացնի ոչ թե կարծիք, այլ հստակ՝ ատենախոսությամբ հիմնավորված պնդումներ, որոնք և պետք է պաշտպանի:

3. Ատենախոսության թերություններինց մեկն այն է, որ հեղինակն աշխատանքի տարբեր հատվածներում օգտագործում է «վնասի հատուցում» և «վնասի փոխհատուցում» հասկացությունները գրեթե որպես հոմանիշներ, մինչդեռ դրանց հարաբերակցությունը իրավական տիրույթում պահանջում է առանձին տեսական հիմնավորում: Մասնավորապես, աշխատանքի տարբեր հատվածներում միաժամանակ նշվում է վնասի հատուցման և փոխհատուցման անհրաժեշտության մասին: Որպիսի պարագայում, անհրաժեշտ է հստակեցնել նշյալ եզրույթների բովանդակային ծավալները:

4. Ներկայացվող երկրորդ պաշտպանության դրույթով հեղինակը կարևորում է վնասի ամբողջական հատուցման սկզբունքը և իրավացիորեն մատնանշում, որ առողջությանը պատճառված վնասի հատուցման կամայական սահմանափակումները կարող են հանգեցնել խախտված իրավունքի ոչ լիարժեք վերականգնման: Հեղինակը կարծես ելնում է այն կանխավարկածից, որ վնասի ամբողջական հատուցման սկզբունքը բոլոր դեպքերում բացառում է օրենսդրի կողմից որևէ սահմանաչափի ամրագրումը, սակայն բազմաթիվ իրավակարգերում, հատկապես հանրային իշխանության պատասխանատվության ոլորտում, օրենսդիրը կարող է սահմանել պատասխանատվության որոշակի սահմաններ՝ հաշվի առնելով ֆինանսական կայունության, կանխատեսելիության և հանրային շահի նկատառումները: Հետևաբար անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու տվյալ ոլորտում այդպիսի սահմանափակումները պետք է դիտվեն անթույլատրելի: Եթե ամբողջությամբ վերացվեն հատուցման առավելագույն սահմանաչափերը, ապա կարող է առաջանալ պետական (համայնքային) բյուջեի կամ վարչական մարմինների ֆինանսական պատասխանատվության զգալի աճի խնդիր:

Ատենախոսությունից, ըստ էության, պարզ չէ, թե հեղինակը ինչպես է գնահատում նման մոտեցման տնտեսական և գործնական հետևանքները:

5. Ներկայացվող վեցերորդ դրույթում հեղինակը նշում է, որ վարչարարության իրավաչափության ստուգման պահանջի հետ միասին իրավունքների վերականգնման, այդ թվում՝ վնասի հատուցման պահանջի ներկայացման հնարավորության և այդ պահանջների լուծման կառուցակարգերի օրենսդրական սահմանումն առավել հիմնավորված և արդյունավետ կդարձնի անձանց իրավունքների պաշտպանությունը, սակայն կարծում ենք, որ այդ կառուցակարգերի չներդնելն ունեցել է իր տրամաբանական պատճառը: Եթե իրավիճակը տեղայնացնենք, օրինակ՝ վարչական ակտով պատճառված վնասի վրա, ապա նախ հարկ է նկատել, որ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից օժտվում է իրավաչափության կանխավարկածով, ուստի քանի դեռ այն ոչ իրավաչափ չի ճանաչվել և ոչ իրավաչափ ճանաչելու մասին վարչական կամ դատական ակտը չի մտել օրինական ուժի մեջ, ապա չի կարող քննարկվել վնասի հատուցման հարցը, քանի որ դեռևս չկա իրավական ուժ ստացած փաստաթուղթ, որով կհաստատվի վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Սույն կարծիքում նշված դիտողությունները չեն ազդում Միքայել Գագիկի Մելքումյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման գործող կարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը կարող է արժանանալ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք,

պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ հանրային և միջազգային
իրավունքի ամբիոնի _____ ի.գ.թ., դոցենտ Ն. Տոնոյան

Հաստատում եմ Ն. Տոնոյանի ստորագրությունը

ՀԵՀ Գիտական խորհրդի քարտուղար _____ ա.գ.թ., դոցենտ Գ. Մանասյան